«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Միլանյա Փանոսյան

Մանկապարտեզ՝ «11» ՀՈԱԿ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ԳԼՈՒԽ 1..... 4

ԽԱՂԵՐԻ ԿԻՌԱՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐՈՒՄ և ԾԵՍԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 2 9

ԾԵՍԵՐԻ ԵՎ ՏՈՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր ժողովրդի մեջ տոն ունենալու և այն նշելու ձգտումը շատ մեծ է: Իրականում հայ ժողովուրդն իր հարուստ մշակույթային անցյալում նաև հարուստ մշակույթային տոնացույց է ունեցել: Այն տոները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռևս հարյուր տարի առաջ շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում: Չնայած դրան որոշ տոներ առանձին շրջաններում շարունակում են պահպանել իրենց կենդանությունը. դրանցից են՝ Վարդավառը, Համբարձումը, Սբ. Զատիկը, Տյառնընդառաջը, Սբ խաչը, Սբ ծնունդը և այլն:

Տոնը թերևս մշակույթի այն տարրն է, որն առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում, ինչը խիստ կարևոր է մշակույթի բազմաթիվ տարրերի ազգայնացման մեր դարաշրջանում: Բազմաթիվ ժողովուրդներ տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, ազգային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգության գործը:

Թեման արդիական է քանի որ, անընդհատ զարգացող աշխարհում յուրաքանչուր ժողովուրդ փորձում է պահպանել իր գաղափարները, պատմությունը և էթնիկ առանձնահատկությունները՝ դարեդար փոխանցելով սերունդներին: Իսկ ազգայինի պահպապումը սկսում է հենց մանկապարտեզի նստարանից, երեխայի ամենանոր ձևավորվող աշխարհընկալումից:

Աշխատության նպատակն է, փորձնական միջոցներ կիրառելով՝ սովորեցնել թե որքան կարևոր են մեր ազգային մշակութային արժեքների փոխանցումը և պահպանումը, ազգային մտածողությամբ և ոգով սերունդներ դաստիարակելը: Ազգային տոների ցուցադրումը նպաստում է երեխայի ֆիզիկական, մտավոր երևակայական զարգացմանը: Յուրաքանչյուր երեխա անհատապես է ընդգրկվում ծիսական արարողակարգի մեջ, անհատապես է ընկալում և յուրացնում ծեսի արժեքը և իմաստը: Ուստի ծեսի ներկայացման գործում առանձնահատուկ են խաղերը, որի մեջ երեխան ներգրավվում է իր կարողությունների չափով: Ստեղծվում է պայման

զարգացելու մտքի ճկունությունը, հմտությունները, երևակայությունը, հիշողությունը և հարստացնում բառապաշարը։

Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար հարկավոր է անպայման ներգրավվել
նախապատրաստման գործընթացին, ծիսական միջավայրի ստեղծմանը, միասին պատրաստել ծիսական պարագաներ, ծիսական կերակուրներ, սովորել ծիսական ազգային երգեր, պարեր: Ծեսի ներկայացման ընթացքում իմանալ իր դերը: Իսկ մենք՝ մեծերս էլ պետք է գիտակցենք, որ բոլորը հավասար մասնակից են՝ իրենց կարողությունների սահմաններում: Այս դեպքում երեխան կդառնան
ծեսն իմացող, կրող, փոխանցող:

Ներկայացման տարրեր ունենալով հանդերձ՝ տոնը ներկայացում չէ, այն կատարողներ և հանդիսատեսներ չունի, այլ բոլորը մասնակիցներ են կատարողներ և ուրեմն մշակույթի ազգային արժեքների հաղորդակիցներ։

Աշխատության մեջ առաջին գլխում անդրադարձել ենք խաղի առանձնահատկության մասին, ինչպիսի դերակատարում ունի և ինչպես է զարգացնում խաղը երեխաների մտածողությունը, ճկունությունը, խոսքը և այլն։ Մանրամասն ներկայացնում ենք, թե ինչպես է խաղի միջոցով կազմակերպվում երեխաների ուսուցումը և դաստիարակման կարևորագույն մասը։

Երկրորդ գլխում խոսվում է ընտանիքում ծեսերի կազմակերպման Կարևորության մասին։ Ներկայացվում է ծնողների գործառույթների մասին, թե ինչպես պետք է մասնակցեն դաստիարակման գործընթացին, հետևեն կազմակերպման պրոցեսին և մասնակից դառնան ցուցադրվող տոնին։ Ներկայացվում է, թե ինչպես են փոխաներազդում ընտանիքը , ծնողները և շրջակա միջավայրը երեխայի վրա։

ԳԼՈՒԽ 1

ԽԱՂԵՐԻ ԿԻՌԱՌԻՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐՈՒՄ և ԾԵՍԵՐՈՒՄ

Խաղը երեխայի զործունեության հիմնական ձևն է, որը տեղի է ունենում, ինչպես երեխայի նախաձեռնությամբ, այնպես էլ մեծահասակների, դաստիարակի նրբանկատ աջակցությամբ և ուղղորդմանբ: Երբ հմտություններն ու գիտելիքները ուսուցանվում են խաղի միջոցով, ապա երեխաները ներգրավվում և հետաքրքրվում են, հասկանում և մտապահում են տեղեկատվությունը: Խաղը էական նշանակություն ունի երեխայի մտավոր, ֆիզիկական, սոցիալակն և հուզական զարգացման համար: Երբ երեխան իր կամքով, ազատ և անվերջ շփվում է այլ մարդկանց կամ իրերի հետ և պահպանում է իր բուռն հետաքրքրությունը, նա սովորում է: Հետազոտության, փորձի և սխալի խելամիտ վերլուծության միջոցով նա իր համար բացահայտում է աշխարհում տիրող ամենախորիմաստ և հիմնավոր համակարգերն ու կառուցվածքները: Խաղը երեխային հնարավորություն է տալիս զննել, ստուգել, զարգացնել մտքեր և գաղափարներ : Խաղալու համար երեխան պետք է փոխներգործի որևէ իրի կամ մարդու հետ:

<<Սուրբ Զատիկ>> տոնի անցկացումը մանկապարտեզում

Զրույց տոնի վերաբերյալ:

Երեխանե՛ր,դուք արդեն բավականին մեծ եք և հավանաբար կհիշեք, թե նախորդ տարի ինչպես եք անցկացրել Հարության տոնը կամ Զատիկը: Քանի որ մոտենում է Զատիկի տոնը, ո՞վ կարող է պատմել ի՞նչ է այն և ինչպե՞ս ենք նշում: Երեխաներին լսելուց հետո ավելացրի, որ յուրաքանչյուր հայ մարդ պետք է ճանաչի, հասկանա, պահպանի և ամենակարևորը այդ արժեքները կրողը և փոխանցողը լինի: Երեխաներին շատ հետաքրքրեց այս զրույցը և նրանք անհամբեր շարժումներով ցանկացան սկսել տոնի պատրաստությունը:

Զրույցից հետո կարդում եմ հանելուկներ.

Տուն ունեմ, դուռ չունի,

Դուրսն արծաթ մեջը ոսկի։

Շնչավորից անշունչ ելավ, անշունրից շնչավոր։

Այսօր կլոր մարմար քար,

Վաղը թռչնի վեր ու վար։

Հանելուկները գուշակելուց հետո սկսում ենք տոնական միջոցառումը, որի նպատակն է ծանոթացնել ազգային մշակույթի արժեքներին, ծեսերին ու տոներին։

Անհրաժեշտ պարագաներ՝ ծառի ճյուղ, նախապես աճեցրած ածիկ, խաղալիք ձվիկներ, գունավոր թելեր, ջրաներկ, նախապես կարմիրով ներկված ձներ։

Պարապունքի ընթացքը՝ Երեխաների հետ նստում ենք կլոր սեղանի շուրջ և խաղալիք ձվերը նկարազարդում ենք, թելերով նախշում, կերտավորում՝ քիթ, բերան, աչքեր, բեղեր, մազեր և այլն։ Զու-տիկնիկներ ենք պատրաստում։ Ծառի ճյուղը բերում ենք կենտրոն, զարդարում այն ձու-տիկնիկներով։ Մեկ ուրիշ սեղանի վրա դնում ենք զատկական բոլոր կերակուրները՝ չամչով փլավ, ձուկ, ավանդական գաթա, կարմիր գինի և այլն։ Ածիկը գեղեցիկ դասավորում ենք կարմիր ներկված ձվերով։ Հնչում է շուրջպարի երաժշտությունը(Խնկի ծառ)։ Բոլորը մեծ շրջան կազմած 《գովնդ》 են պարում։ Երեխաներից մեկը ծեսի ընթացքում զատկածառն է պարեցնում։ Երեխաների մի խումբը (երաժշտության դադարից հետո).

-Զատկե -զատի՛կ է, նավակատի՛կ է, չամչե հատի՛կ է։

Մյուս խումբը. - Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ։

Բոլորը երգում ու պարում են 《 արև՛, արև՛, ե՛կ, ե՛կ 》։

Երգի ավարտից հետո բոլորը.

-Մարիա՛մ խաթուն, Մարիա՛մ խաթուն,

-Իջի՛ մեր տուն,իջի՛ մեր տուն։

Ես քեզ կտամ նուշի կտոր։

Բոլորը երգում են 《զա՛րկ, բոլոճիկ երգը》 և խաղում։ Խաղում են զույգ-զույգ, զույգի մեկը կքանստում է(գնդակ է դառնում և կքանստած թռվռում է գնդակի նման), մյուսը կանգնում է նրա գլխավերևում և շատ թույլ հարվածելով(գնդակի գլխին)՝ խաղացնում է նրան։ Մյուսները տեղերում են երգում և նույն խաղը խաղում։ Խաղից հետո զատկական ասույթներ են արտասանում՝

Դռան առաջ հերկեցինք ,զատկի ձվեր ներկեցինք,

Դրկցին ողջույն տվեցինք։

Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ։

Զատիկն առանց ձվի չի լինի։

Ասույթներից հետո բոլոր երեխաները մոտենում են տոնական սեղանի շուրջ՝ համտեսելու զատկական ուտելիքները միմյանց մաղթելով՝ բարի ախորժակ։

Այսպիսով կազմակերպելով այս փոքրիկ միջոցառումը երեխաները ծանոթացան հայկական ժողովրդական ծեսերից մեկին՝ Սուրբ Զատիկին։ Դարձան տոնի անմիջական մասնակիցը և կատարողը։Սովորեցին ծիսական երգ-պարին ու խաղին։ Երեխաների անդադար ժպիտները, ակտիվ մասնակցությունը, բարձր տրամադրությունը և մեծ հետաքրքրությունը տոնի հանդեպ հասավ ակնկալվող արդյունքին։

Մեթոդիստի դիտարկումը պարապմքունի վերաբերյալ

Դիտարկման նպատակն է դաստեարակի պատրասվածությունը պարապմունքին և երեխաների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի մակարդակի ուսումնասիրությունը: Պարապմունքի թեման է 《Սուրբ Զատիկ》 տոնի անցկացումը մանկապարտեզում: Դաստիարակի նպատակն է ծանոթացնել ազգային ծեսերին ու տոներին: Պարապմունքն սկսվեց զրույցով և հանելուկներով: Այն թեմայի նպատակային քննարկումն էր, որը կազմակերպված էր և լավ մշակված, ինչն էլ օգնեց երեխաներին անմիջապես կռահել պարապմունքի թեման: Դաստիարակը սովորեցնում էր երեխաներին տրամաբանորեն և կապակցված արտահայտել իրենց մտքերը:

Երեխաները դաստիարակի օգնությամբ կատարեցին մի շարք գործնական աշխատանքներ(ներկեցին ձվերը, խաղալիք ձվերը նկարազարդեցին, ծառի ճյուղը զարդարեցին ձու-տիկնիկներով): Ներկայցրեցին զատկա ուտեստները, բացատրեցին դրանց խորհուրդը: Երեխաները շատ ակտիվ էին, ազատ, նրանց տրամադրությունը էլ ավելի բարձրացավ երբ սկսեցին խաղալ, երգել ու պարել: Խմբասենյակում տիրում էր տոնական մթնոլորտ: Դաստիարակի հարցերը հստակ էին, համառոտ և հասկանալի երեխաներին:

Ուսուցումը իրականացվեց համատեղ գործունեության ընթացքում , որտեղ և՛ երեխան, և՛ դաստիարակը նույն հարթության մեջ էին։ Դաստիարակը պարապմունքի ընթացքում խորհրդատու էր, օգնական, ավագ ընկեր և ոչ թե թելադրող։ Դաստիարակը հասավ իր նպատակին, աշխատանքները ուղղված էին ուսումնական հանձնարարությունը լսելու և կատարելու, ընկերների պատասխանները լսելու կարողությունների ձևավորմանը։

Ազգային տոներն ու ծեսերը յուրաքանչյուր ազգի ինքնության կարևոր բաղադրիչներից են։ Հայկական ավանդական ծեսերն ու տոները արտացոլում են ազգային առանձնահատկությունները և տալիս են պատկերացում նրա կենսակերպի, արժեքների առօրիայի մասին, ուստի այդ արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու համար իր ուրույն տեղն ունի նախադպրոցական կրթության ոլորտը։

Մեթոդիստ՝ Հասմիկ Մովսիսյան

ԳԼՈՒԽ 2

ԾԵՍԵՐԻ ԵՎ ՏՈՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Գնալով ընտանիքի լրջագույն խնդիրն է դառնում սերունդների միջև առկա տարաձությունը կամ ճեղքվածքը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը գլխիվայր շուռ են տվել մարդկային պատկերացումները, զարգացումը, մտավոր, ֆիզիկական և հոգեբանական պատկերացումները: Այլևս անցյալի պես ընտանիքը, ավանդույթները և ավանդական ծեսերը հասարակական կյանքին ծանոթանալու միակ աղբյուրը չեն համարվում: Հասարակության մեջ ընդգրկվելու պայմանների մի մասն են համարվում վիրտուալ և տեղեկատվական ինֆորմացոն հոսքին մշտապես հետևելը, որոնք ավելի մեծ ուշադրության են արժանանում և երբեմն էլ նվազագույնի են հասցնում ընտանիքի և ավանդույթների ազդեցությունը:

Ծնողները երբեմն մոռանալով զավակների հետ իրենց սերնդի տարբերությունները, նրանց չեն դաստիարակում ապագա կյանքի համար՝ անտեսելով մանկապարտեզի հետ համագործակցությունը: Ընտանիքի անդամները նույնպես պետք է լինեն տեղեկացված, մշտապես կրթվեն և կատարելագործվեն, տեղեկություններ ձեռք բերեն տեղեկատվական նոր դաշտի, նորօրյա առաջադիմությունների և տեխնոլոգիաների վերաբերյալ, որպեսզի կարողանան և՛ օգնեն իրենց զավակներին և՛ կարողանան հսկել նրանց գործունեությունը: Ծանոթ լինելով դարաշրջանի նորարարություններին՝ ծնողները կարող են ավելի լավ ընկալել իրենց զավակների կարիքները, նորովի կազմակերպել երեխաների հետ կապը: Ծեսով ուսուցումը ազգապահպան գործառույթ ունի: Ընտանեկան միջավայրը մեծ դերակատարում և ներդրում ունի երեխաների ծեսի յուրացման գործում՝ շատ ժամանակ լինելով ծնող-երեխա-դաստիարակ կապի գլխավոր բաղադրիչը: Ամփոփելով միտքը՝ կարող ենք ասել, որ ծեսերն ու ավանդույթները պետք է դառնան ընտանեկան միջավայրի բաղկացուցիչ մասը և այդ գործում անելիքները ոչ միայի դաստիարակին են, այլև ընտանեկան և կրթական միջավայրինը, որտեղ ձևավորվում, զարգանում և հասունանաում է երեխան որպես անհատ: Դառնալով դարերից եկող ավանդութները

կրող անձ՝ երեխան ինքը ծեսերն ու տոները կավանդի իրենցի հետո եկող սերունդներին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով թեման, կարող ենք արձանագրել, որ յուրաքանչյուր սերունդ ապրելով իր ժամանակաշրջանում, այնուամենայնիվ կարիք ունի նախորդ սերնդից վերցնելու որոշակի փորձառություններ, տարրեր և առանձնահատկություններ: Փորձել ենք առանձնացնել կետեր, որոնք կարևոր են նախադպրոցական երեխաների դաստիարակման փուլում.

1. Եթե ժողովրդական ծեսերն ու տոները ներկայացնենք խաղի, երգի և պարի միջոցով, ապա կնպաստենք երեխայի խոսքի, մտքի, տրամաբանության, ճկունության զարգացմանը:

2. Եթե մենք՝ դաստիարակներս, տոնական միջոցառումներում կրկնապատկենք բեմական ներկայացումները, սյուժետադերային խաղերը, ապա երեխաների մեջ կսերմանենք բարություն և մեկ քայլով կմոտեցնել բնությանը:

3. Եթե Ընտանիքը օգնի և մշտապես մասնակից լինի երեխայի ծեսով դաստիարակման պրոցեսին,ապա սերնդեսերունդ կփոխանցվի մշակութային արժեքները :

4. Ծեսերը օգնում են առավել խորն ընկալել ժամանակի ու հասարակության թելադրած պայմանները և ամեն տոն ներկայացնել դրանց համահունչ, չկորցնելով ազգային մշակութի ուրույն դիմագիծը:

Ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները, եկանք այն եզրահանգման, որ նախադպրոցական կրթական գործընթացում ճիշտ ընտրված կրթական միջավայրը միայն կնախապատրաստի նրանց կյանքի գործունեության բոլոր ձևերում՝ դարձնելով բնասեր, ազատ, աշխույժ, ինքնուրույն և բարի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

Հայ ժողովրդական տոնները - Հրանուշ Խառատյան-Առաքելյան

https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2001-2011/toner_2005.pdf

Խաղաղարան

ԿԱՅՔԵՐ

https://liliazakharyan.wordpress.com/